

Պատասխաններ

9-րդ դասարան

1. գ) Հայկական լեռնաշխարհ
2. Պորտուգալիա, Կանադա, Սան Մարինո, Դանիա, Մոնակո, Կորեայի հանրապետություն, Բրունեյ, Արևելյան Թիմոր, Կատար, Գամբիա, Լեսոթո, Հայիթի, Դոմինիկյան հանրապետություն, Պապուա-Նոր Գվինեա
3. գ) Պամիրը ամենաբարձր լեռնաշխարհն է
4. Ավաջինսկայա սուպկա – Կամչատկա թերակղզի
Հեկլա – Իսլանդիա կղզի
Մաունա Կեա – Հավայան կղզիներ
Էրեբուս – Ռոսի կղզի
5. ա) ամառը՝ չոր և շոգ, ձմեռը՝ մեղմ և խոնավ
6. Պակիստան, Էկվադոր
7. Ջրաէներգետիկ ռեսուրսներ – Նորվեգիա
Այրվող վառելիք – Ռումինիա
Միջուկային վառելիք – Հարավային Կորեա
Այլընտրանքային էներգիայի աղբյուր - Իսլանդիա
8. գ) Տյան-Շան
9. Կուրիլյան կղզեխումբ
10. գ) բուրերը
11. Կարմրադեղնավուն և կարմիր ֆերալիտային հողերը՝ հագեցած այլումինով և երկաթով: Հողի այս տեսակն առաջանում է խոնավ և տաք եղանակային և կլիմայական պայմաններում (25°C և ավել ջերմաստիճանի և տեղումների տարեկան քանակի՝ 2500մմ և ավելի, պայմաններում): Հումուսի պարունակությունը՝ 5% :

12. $40076 : 24 : 60 : 60 =$

1 ժամ = 1670 կմ

1 րոպե = 27,83 կմ

1 վրկ = 0,46 կմ

13. Մոնրեալ – Կանադա, Քեյփթաուն – ՀԱՀ, Կասաբլանկա – Մարոկկո, Սան Պաոլո – Բրազիլիա, Յոկոհամա – Ճապոնիա

14. ք) հս.լ. $23^{\circ}30'$ ու հս.լ. $66^{\circ}30'$ և հվ.լ. նույն աստիճանների գուգահեռականների միջև

15. ա) Գետի գետաբերանում կոշտ հոսքի կուտակումից առաջացած եռանկյունաձև ցամաք, որը գետի ճյուղավորումներով բաժանվում է բազմաթիվ կղզիների: Դելտա է կոչվել հունարեն դելտա տառի ձև ունենալու պատճառով:

Ընդարձակ, հեղեղված, կիսալուսնաձև գետաբերան, որի ձևավորումը պայմանավորված է գետաբերանի շրջանում ալիքի ուժի կատարած աշխատանքով:

ա) Լենա, Միսիսիպի

բ) Կոնգո, Կոլորադո

16. Ջրային ավազաններից հեռանալիս ձմեռը դառնում է խիստ, ամառը՝ շոգ, տարեկան տեղումների քանակը՝ քիչ (ցամաքային կլիմա), ջերմաստիճանի օրական և տարեկան լայնույթը՝ մեծ և հակառակը:

17. տափաստան, լեռնաշխարհ

լիճ,

ջրվեժ

բ) տափաստան – խոտածածկով բնական զոնա: Կլիման չոր ցամաքային է, ամառը շոգ է՝ 20°C -ից բարձր, ձմեռը՝ ցուրտ, տ.տ.ք.՝ 300-400մմ: Ծածկված են սևահողերով: Բուսականությունը՝ բազմամյա և միամյա խոտաբույսեր, կրծողներ, թռչուններ: Պրերիաներ, պամպաներ, պուշտաներ, ստեպներ:

Լեռնաշղթաներ և սարահարթեր, միջլեռնային գոգավորություններ, անկանոն հսկայական կուտակումներ: Օր՝ Տիբեթ, Պամիր, Ալթայ, Հայկական, Իրանական:

Լիճ – ցամաքի այն բնական գոգավորությունը, որը լցված է ջրով, կապ չունի համաշխարհային օվկանոսի հետ կամ կապը միակողմանի է: Կասպից – ամենամեծ, Բայկալ – ամենախորը, Մեռյալ և այլն:

Ջրվեժ – գետի հունում ջրի գահավիժում որոշակի բարձրությունից, զառիվայր սանդղավանդից:

18. ա. $680\text{մմ} - 330\text{մմ} = 350\text{մմ}$

բ. $350\text{մմ} \times 10 = 3500\text{մ}$

գ. $3500\text{մ} + 800\text{մ} = 4300\text{մ}$

դ. $1000\text{մ} - 5^\circ\text{C}$

ե. $X = 3500 \times 5 / 1000 = 17.5$

$-3^\circ\text{C} + 17.5^\circ\text{C} = 14.5^\circ\text{C}$

19.

1. Դրակոնյան լեռներ
2. Կիլիմանջարո
3. Կամերուն հրաբուխ
4. Վիկտորիա լիճ
5. Նամիր անապատ
6. Գաբոն
7. Լուանդա
8. Մադագասկար կղզի